

ԱՐՑԱԽԻ ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՀԱՅ
ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՐՑԱԽՅԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱԿԱԴԱՐՁՈՒՄՆԵՐՆ
ՈՒ ՀԵՏԱԳԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ
Բալայան Վ. (ԱրՊՀ, ԼՂՀ)
vahrambalayan@mail.ru

Բանալի բառեր՝ Արցախ, հայագիտություն, ազգային,
կեղծարարներ, Ադրբեջան:

ԼՂՀ կարգավիճակի շուրջ ծավալված միջազգային քննարկումները, պատմական հայրենիքի գերյալ տարածքների մի մասի ազատագրումը հրատապ պահանջ են առաջադրել խորապես ուսումնասիրել և հստակ պատկերացում կազմել Հայոց Արևելից նահանգների վաղանցյալ իրողությունների մասին: Ադրբեջանի և Թուրքիայի հակահայ քարոզչության և իրական պատմության խեղաթյուրման պայմաններում խնդրո առարկա թեմայի ուսումնասիրությունը հրատապ է դառում: Սույն թեման հնարավորություն է ստեղծում պայքարել պատմության կեղծարարների դեմ և Արցախի պատմության ստվերոտ կողմերի լուսաբանման համար նախանշում համապատասխան քայլեր:

Հետխորհրդային շրջանի Ադրբեջանի ղեկավարությունը իրենց գիտնականներին հորդորում է հիմնավորել, որ ոչ միայն ԼՂՀ-ն, այլ նաև ՀՀ-ն կազմավորվել են ադրբեջանական հողերի վրա: Պատմության կեղծարարները, ոգևորվելով իշխանությունների բացահայտ աջակցությունից, մի աննախադեպ արշավ սկսեցին՝ ծուռ հայելու մեջ ներկայացնելով Հայոց Արևելից նահանգների հեռավոր անցյալի, ինչպես նաև ներկա իրողությունները: Եթե խորհրդային ժամանակահատվածում Ադրբեջանի պաշտոնական շրջանակները և պատմաբանները հիմնականում ձգտում էին «գիտական» տեսանկյունից յուրացնել Հայոց Արևելից նահանգների

էթնոմշակութային տարածքը, ապա ներկա ժամանակներում դրան գումարվել է ևս երկու գերխնդիր.

ա/ սեփական ժողովրդին, մասնավորապես՝ երիտասարդությանը մոլորության մեջ պահելով՝ նրանց մեջ սերմանել հակահայկական տրամադրություններ և, անհրաժեշտության դեպքում, վերջիններիս մղել արկածախնդրության,

բ/ գոհի կերպարանքով ներկայանալով համաշխարհային հանրությանը՝ փորձել մեծ տերություններին տրամադրել ՀՀ-ի և ԼՂՀ-ի դեմ:

Արցախում քաջ գիտակցում են, որ անհրաժեշտ է ոչ միայն անխոցելի դարձնել հայրենի սահմանները, այլ նաև ադրբեջանական ոտնձգություններից անաղարտ պահել բազում դարերի ընթացքում Հայոց Արևելից նահանգներում ստեղծված պատմամշակութային արժեքները: Իսկ դրան միայն կարելի է հասնել ԼՂՀ-ում հայագիտական դպրոց ունենալու պարագայում: Արցախահայության պետականության վերակերտումը նոր հեռանկարներ է բացել այդ խնդրի լուծման համար: Դեռևս 1989 թ. ՀՀ ԳԱԱ պատմության, հնագիտության և ազգագրության, արվեստի ինստիտուտների և Մատենադարանի նախաձեռնությամբ Ստեփանակերտում հիմնադրվել էր հայագիտական կենտրոն: Պատերազմի տարիներին կենտրոնը դադարել էր գործելուց: Չնայած դրան, սփյուռքահայ բարերարների, հատկապես ՀՅԴ Արցախի կառույցի և համալսարանի մի խումբ դասախոսների ջանքերով, 1997 թ. ԱրՊՀ-ում ստեղծվել է հայագիտական կենտրոն: Կատարված ուսումնասիրությունները հրապարակելու նպատակով 2003 թվականից լույս է ընծայվում «Պատմագիտական ուսումնասիրություններ» ժողովածուն, իսկ 2010 թվականից՝ «Հայագիտական հանդես»-ը:

ԼՂՀ-ում մեծ ուշադրություն է դարձվում պատմաբան կադրերի պատրաստման գործին: Այսօր ԱրՊՀ պատմության բաժնում սովորում են 199 ուսանողներ ու ասպիրանտներ: Վերջին 5

տարիներին պատմագիտության բնագավառում 5 հոգի պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ, որոնք նվիրված են Արցախի պատմության հիմնահարցերին: ԼՂՀ կազմավորումից առ այսօր հանրապետության հայագետների կողմից հրատարակվել են հարյուրավոր գրքեր, հոդվածներ: Նշանակալից հաջողություններ են արձանագրվել ազատագրված տարածքներում պատմական հուշարձանների հայտանբերման և ուսումնասիրման գործում:

Այսօր հրատապ անհրաժեշտություն է. ա/ կատարված ուսումնասիրությունները հրատարակել օտար լեզուներով, բ/ այդ աշխատանքներին առավել մեծ չափերով ներգրավել արտասահմանյան հայագետ հետազոտողների, գ/ վերոհիշյալ բնագավառը առավել մրցունակ դարձնելու նպատակով՝ դրան ավելի շատ պետական միջոցներ հատկացնել, դ/ հաճախակի կազմակերպել միջազգային գիտաժողովներ, ե/ ապահովել ԱրՊՀ շրջանավարտ պատմաբանների հետագա ուսումը արտասահմանյան ԲՈՒՀ-երում:

THE REPRESENTATION OF NEW AND NEWEST PERIODS OF ARTSAKH HISTORY
IN THE AZERI HISTORIOGRAPHY. THE FURTHER DEEDS AND REACTIONS OF
ARTSAKH'S SCHOOL OF THE ARMENIAN HISTORIOGRAPHICAL CONCEPTIONS

Balayan V. (Artsakh State University, Nagorno Karabakh Republic)